ծայում «Հայաստանի հանքային աղբյուրները» շատ կարևոր մենագրություններ։ Լ. Հովհաննիսյանի կողմից զեկավարված հանձնաժողովի անխոնջ աշխատանքների շնորհիվ 1925 թ. հիմնադրվում է «Արզնի» առողջարան՝ սրտաբանական կուրորտոլոգիայի այդ կարևոր կենտրոնը։

Անգնահատելի է Լ. Հովհաննիսյանի վաստակը հայ բժշկության պատմության գիտական ուսումնասիրման բնագավառում։ Բավական է նշել, որ դեռևս 1913 թ. նա Կովկասյան բժշկական ընկերության նիստում զեկուցել է այդ մասին, իսկ 1928 թ. լույս է ընծայել արժեքավոր մենագրություն։ Սակայն Լ. Հովհաննիսյանի խոշոր տաղանդը և շատ հարուստ գիտելիքները ամփոփվել են իր կապիտալ աշխատության՝ «Հայ բժշկության պատմության» հինգ հատորյակի մեջ, որը լույս է տեսել 1946—1947 թթ.։ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հայ բժշկության և կենսաբանության պատմության սեկտորը ակնառավոր գիտնականի և իր աշխատակիցների համար լայն հնարավորություններ է ստեղծում ուսումնասիրելու հայ բժշկության հարուստ ժառանգությունը և այն դարձնելու համաշխարհային գիտության սեփականություն։ Այդ խոշոր աշխատանքները բարձր գնահատական են ստանում, և Լ. Հովհաննիսյանը 1962 թ. ընտրվում է Բժշկագիտության պատմության նորաստեղծ միջազգային ակադեմիայի իսկական անդամ։

Մեծ են Լ. Հովհաննիսյանի ծառայությունները Հայաստանում սրտաբանության զարգացման գործում։ Նրա հետազոտությունները սրտային ազմուկների և ներոզների խնդրում ստացել են համընդհանուր հանաչում։ Նրա զեկավարությամբ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի ցանցում ստեղծվում է սրտաբանության սեկտոր, որը 1961 թ. վերածվում ինքնուրույն ինստիտուտի՝ սրտաբանության և սրտի վիրաբուժության ինստիտուտի։ Այդ կարևոր գիտական օջախի ստեղծումը, որի հետագա զարգացումը Լ. Հովհաննիսյանը հանձնեց երիտասարդ և եռանդուն գիտնականների, նոր գլուխ բաց արեց Հայաստանի բժշկագիտության պատմության մեջ։

Լ. Հովհաննիսյանի հեղինակությամբ լույս են տեսել ավելի քան 170 գիտական աշխատություններ, որոնց թվում ավելի քան 20 մենագրություններ և մի շարք դասագրքեր։ Նրա ծառայությունները հանրապետությունում բժշկական գիտական և մանկավարժական կադրերի պատրաստման, բժշկական գրականության, տերմինաբանության և բառարանագիտության ստեղծման և զարգացման, բժշկագիտական ընկերությունների կազմակերպման, հայ բժշկական մշակույթի տարածման գործում լավագույն գրականն են՝ գնահատելու նրան որպես ակնառավոր սովետական բժշկի, խոշոր գիտնականի ու մանկավարժի, հասարակական և մշակութային եռանդուն գործչի։

Թանկագին հորելյարին՝ մեծավաստակ գիտնականին ու բյուրեղյա մարդուն ցանկանում ենք բարեառողջություն, երկար կյանք, հետագա հաջողություններ, բեղմնավոր գործունեություն և նոր գիտական նվաճումներ։

Զ. ԴՈԼԱԲՋՅԱՆ

## ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԵՐԵԿՈ

1965 թ. հունվարի 29-ին ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայում տեղի ունեցավ հորելյանական երեկո՝ նվիրված Փիլիսոփայության և իրավունքի սեկտորի ավագ գիտաշխատող, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Վազգեն Կարապետի Զալոյանի ծննդյան 60 և գիտական գործունեության 35-ամյակին։ Գիտնականի կյանքի և գործունեության մասին զեկուցեց փիլիսոփայական գիտությունների թեկնածու Ա. Թևոսյանը։

Վ. Զալոյանը հանդիսանում է Սովետական Հայաստանի փիլիսոփայական-դաղափարական բնագավառի ավագ սերնդի ճանաչված դեմքերից մեկը։ Այդ ասպարեզը մտնելով դեռևս 30-ական թվականներին, նա եռանդուն կերպով զբաղվում է մանկավարժական և գիտական գործունեությամբ։

Վ. Զալոյանը ծնվել է 1905 թ. Ալեքսանդրապոլում (Լենինական)։ Սկզբնական կրթությունն ստացել է ծննդավայրում։ Ավարտելով Երևանի Աբովյանի անվան դպրոցը, 1923 թ. նա ընդունվում է պետական համալսարանի հասարակական գիտությունների ֆակուլտետը, որը հաջողությամբ ավարտում է 1926 թ.։ Մինչև 1930 թ. զբաղվում է մանկավարժական գործունեությամբ։ Այնուհետև կարդում է դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի կուրս բժշկական ինստիտուտում և Երևանի պետական համալսարանում։ Դասախոսական աշխատանքին զուգահեռ, 1930—34 թթ. նա միաժամա-

նակ վարում է կերպարվեստի պատմության և գրականության թանգարանի դիրեկտորի պաշտոնը։ 1934 թ. ընդունվում է Մոսկվայի պատմա-փիլիսոփայական ինստիտուտին կից ասպիրանտուրան՝ փիլիսոփայության պատմության գծով, որն ավարտում է 1935 թ.։

1938 թ. Վ. Զալոյանն ընդունվում է աշխատանքի ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի պատմության ինստիտուտում։ Սկսելով իր գործունեությունը կրտսեր դիտաշխատողից, նա, առաջինը Հայաստանում, հասել է փիլիսոփայական գիտությունների դոկտորի կոչման։

Ակադեմիայում գիտական ասպարեզ մտնելու առաջին իսկ օրերից Վ. Զալոյանը կողմնորոշվում է դեպի հայ ժողովրդի փիլիսոփայական մտքի պատմության ուսումնասիրությունը։ Արդեն 25 տարուց ավելի է, ինչ նա ջանք, եռանդ ու ուժ չի խնայում վեր հանելու և արժեքավորելու հայ բազմադարյան փիլիսոփայական մտքի հարուստ ժառանգությունը։

Բազմաթիվ են Վ. Զալոյանի գրչին պատկանող ուսումնասիրությունները։ Նրա անդրանիկ աշխատությունը նվիրված էր V դարի հայ նշանավոր մտածող Եղնիկ Կողբացու փիլիսոփայական հայացքների քննությանը։ Նրա մյուս աշխատության մեջ տրված է հայ փիլիսոփայական մտքի ականավոր ներկայացուցիչ Դավիթ Անհաղթի փիլիսոփայական ուսմունքի օննաղատական վերլուծությունը։

Իր բազմամյա հետազոտությունները Վ. Զալոյանը ամփոփում է «Հայ փիլիսոփայության պատմություն» աշխատության մեջ։ Օգտագործելով Մատենադարանում պահվող բազմաթիվ ձեռագիր ու տպագիր նյութեր, նա տվել է հայ փիլիսոփայական մտքի սիստեմատիկ շարադրանքը սկսած նրա ձևավորման շրջանից մինչև XVIII դարը ներառյալ։ Նա մի առանձին ուսումնասիրություն է նվիրել նաև այսպես կոչված հայկական վերածննդին։

Վ. Զալոյանը մեծ ծառայություն ունի ոչ միայն հայ փիլիսոփայական միտքը Սովետական Միության և այլ ժողովուրդների սեփականությունը դարձնելու, այլև հայ փիլիսոփայական մտքի հուշարձանները հրատարակելու գործում։ Նա անդրկովկասյան և միութենական բազմաթիվ փիլիսոփայական բանավեճերի ակտիվ

մասնակիցներից է։ Զգալի է նաև նրա դերը փիլիսոփայական որակյալ կադրեր պատրաստելու գործում։

Հոբելյարին ողջունեցին ՀՍՍՌ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի, պատմության, գրականության, հնագիտության և ազգագրության, արվեստի ինստիտուտների, Պետական համալսարանի, Վ. Բրյուսովի անվան ռուսական և օտար լեզուների ինստիտուտի, մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի, Մատենադարանի և ռեսպուբլիկայի այլ գիտական հաստատությունների ներկայացուցիչները։

Երեկոյի վերջում շնորհակալական խոսքով հանդես եկավ հոբելյարը։

Լ. ՄԵԼՔՈՆՅԱՆ